ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ. ԽՐԱԽՈՒՍՈՒՄ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ, ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտական զեկույց

Արմավիր 2023

Ուսումնասիրությունն իրականացվել է ԱՄՆ դեսպանատան կողմից ֆինանսավորվող «Երիտասարդների քաղաքացիական մասնակցության և սոցիալական պատասխանատվության խթանումը համայնքներում» ծրագրի շրջանակում: Ծրագրի նպատակն է նպաստել համայնքներում երիտասարդների քաղաքացիական մասնակցությանը՝ հզորացնելով նրանց հետապոտական և վերահսկողական կարողությունները: Ծրագիրն իրականացվում է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի և իր գործընկերների՝ «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» և «ՄԻՏՔ» ՀԿ-ների կողմից:

Հեղինակներ՝

Հետազոտության ղեկավար՝ Լևոն Չուկակյան

Ավագ հետազոտող՝ Ծովինար Դանիելյան

Հետազոտական խմբի անդամներ՝ Քրիստինե Վարդանյան, Շողեր Ղլիջյան, Լյուբա Ելկինա, Տաթև Հայրապետյան, Ռադիկ Սարգսյան

Սույն զեկույցը հրապարակվել է ԱՄՆ դեսպանատան ֆինանսական աջակցությամբ: Զեկույցի բովանդակության համար պատասխանատու է «ՄԻՏՔ» ՀԿ-ն, և այն չի արտացոլում ԱՄՆ դեսպանատան տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԱԳԻՐ 4

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 7

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 8

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 9

ԳԼՈՒԽ 1. ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԻ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄՇԱԿՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 10

1.1. Արմավիրի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքի և համացանցային այլ աղբյուրների, հարթակների և գործիքների միջոցով բնակիչների իրազեկման ուսումնասիրության արդյունքներ. 10

1.2. Արմավիր համայնքում բնակիչների մասնակցության թեմայով նախորդ տարիներին իրականացված հետազոտությունների ուսումնասիրություն 12

1.3. Արմավիր համայնքում բնակչության մասնակցության վերաբերյալ ՏԻՄ-երի կողմից կայացված որոշումների և դրանց կատարման ուսումնասիրության արդյունքներ 15

ԳԼՈՒԽ 2. ՖՈԿՈՒՍ-ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ, ՔՀԿ ԵՎ ՏԻՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 19

2.1. Ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքներ 19

2.2. ՔՀԿ ներկայացուցիչների հետ հարցազրույցների արդյունքներ 21

2.4. Համայնքի ղեկավարի հետ հարցազրույցի արդյունքներ 25

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 29

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ 31

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 32

Հավելված 1 32

Հավելված 2 33

Հավելված 3 34

Հավելված 4 35

ԱՄՓՈՓԱԳԻՐ

2021թ.-ին ՀՀ-ում տեղի ունեցած համայնքային խոշորացումից հետո և ընտրությունների արդյունքում ձևավորված նոր ՏԻՄ-երի առկայության պարագայում անչափ կարևոր էր ուսումնասիրել տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության ներկա իրավիճակը և առկա խնդիրները: Ելնելով վերոնշյալից հետազոտության հիմնական 2 նպատակներն են սահմանվել՝

1. Պարզել, թե Արմավիր համայնքում ՏԻՄ-երը որքանո՞վ են բավարար ջանքեր գործադրում՝ բնակչության շրջանում հասանելի դարձնելու մասնակցային մեխանիզմների և հնարավորությունների մասին տեղեկատվությունը և ապահովելու բնակիչների ներգրավումը որոշումների կայացմանը:
2. Բնակչության շրջանում վերհանել այն խնդիրները և պատճառները, որոնք բացասական ազդեցություն են ունենում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության վրա:
3. Հետազոտության իրականացման համար ընտրվել են հետևյալ մեթոդները՝ փաստաթղթային ուսումնասիրություններ, հարցազրույցներ ՏԻՄ և ՔՀԿ ներկայացուցիչների հետ, ֆոկուս-խմբային քննարկումներ բնակիչների շրջանում:

Առաջին փուլով դիտարկվել են հետևյալ փաստաթղթերը՝ ՀՀ Սահմանադրության 9-րդ գլուխը, ՏԻ մասին ՀՀ օրենքը, ՀՀԶԾ-ն, համայնքի վերջին երեք տարիների ՏԱՊ-երը և բյուջեները, ավագանու և համայնքապետի վերջին երեք տարիների որոշումները և դրանց կատարման արձանագրությունները, հանրային լսումների և քննարկումների մասին հաշվետվությունները, արձանագրությունները, նախորդիվ կատարված հետազոտական աշխատանքները: Վերոնշյալ ուսումնասիրության արդյունքներով վերհանվել են հետևյալ կարևոր խնդիրները, որոնք հետագա լուծման և ակտիվ աշխատանքների կարիք են ունենալու.

1. Համայնքում անցկացված հանրային լսումների, քննարկումների և ավագանու նիստերի արձանագրությունների մասով կարիք կա հստակ ձևակերպելու բնակիչների ներկայացրած խնդիրներն ու առաջարկները:
2. Ավագանու նիստերի կազմակերպման հարցերում անհրաժեշտություն է զգացվում քայլեր ձեռնարկել արտահերթ նիստերին բնակիչների մասնակցության առումով առաջ եկող խնդիրների լուծման համար:
3. Ըստ օրենքի պահանջի, պետք է իրականացնել ավագանու նիստերի հեռարձակումը համայնքի պաշտոնական կայքում:
4. ՏԻՄ-երի ներկայացուցիչների և համայնքապետարանի աշխատակիցների կողմից առավել մեծ ջանքերի գործադրման կարիք է զգացվում սոցցանցերում և առցանց տարբեր հարթակներում՝ համայնքի բնակիչներին ՏԻ-անը մասնակցության հնարավորությունների հետ ծանոթացնելու և ներգրավելու համար:
5. ՏԻՄ-ՔՀԿ ջանքերով կարիք կա խթանիչ աշխատանքներ իրականացնել համայնքի երիտասարդների նկատելի պասիվությունն ու անտարբերությունը կրճատելու և բեկում մտցնելու ուղղությամբ:

6. Անբավարար են համայնքում տեղական ժողովրդավարության զարգացմանն ու այդ համատեքստում ՏԻ-անը բնակիչների մասնակցության խթանմանն ուղղված մշտադիտարկումներն ու հետազոտությունները:
7. Հարկավոր է առավել մեծ ջանքեր գործադրել «Մասնակցել համայնքի զարգացմանը» էլեկտրոնային գործիքի մասին բնակչության շրջանում տեղեկատվության տարածման և նրանցից մեծ թվով առաջարկների հավաքագրման ուղղությամբ:
8. Ավագանու որոշմամբ սահմանված խրախուսական մրցանակների շնորհման մեխանիզմի կիրառումը կարևոր քայլ կլինի համայնքում մասնակցային մշակույթի զարգացման համար:

Հետազոտական աշխատանքների երկրորդ փուլով իրականացված ֆոկուս-խմբային քննարկումների և հարցազրույցների արդյունքներով վերհանվել են հետևյալ կարևոր ուղղությունները, որոնք հետագա բարելավման և ակտիվ աշխատանքների կարիք են ունենալու.

1. Բոլոր շահագրգիռ կողմերի կողմից նշվել է, որ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության մակարդակը ցածր է, որի հիմնական պատճառներն են՝ բնակիչների շրջանում մասնակցային իրավունքների և մեխանիզմների մասին տեղեկացվածության ցածր մակարդակը: Չնայած այս համատեքստում ՏԻՄ-ի գործադրած ջանքերին՝ արդյունքները գոհացուցիչ չեն և անհրաժեշտ է ՔՀԿ-ՏԻՄ-Համայնքի բնակիչներ օղակում առավել արդյունավետ աշխատանք և համագործակցություն:
2. Անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել առցանց գործիքների կիրառմանը և ներդրմանը, իսկ արդեն կիրառվողների պարագայում մշակել դրանց տարածման և հանրային լայն ընդգրկում ապահովելու մեխանիզմներ:
3. Համայնքի պատվիրակմամբ տեղի չեն ունենում տարբեր հիմնախնդիրների և առաջնահերթությունների սահմանման համար նախատեսված հարցումներ և հետազոտություններ, որոնք բնակիչների համար մասնակցային արդյունավետ մեխանիզմ կարող են հանդիսանալ, իսկ համայնքային իշխանությունների համար ունենալ կարևոր խորհրդատվական նշանակություն:
4. Բնակիչների մասնակցության ակտիվությունը խթանելու համար նախատեսված խրախուսանքի որևէ տարբերակ չի կիրառվում, ինչը կարող էր բարձրացնել մասնակցության հանդեպ բնակիչների հետաքրքրվածությունը:
5. Նկատվող հիմնական մասնակցային ակտիվությունը դրսևորվում է առավելապես անձնական շփումների մակարդակում և չի ձևափոխվում ինստիտուցիոնալ մասնակցության մոդելի, իսկ բովանդակային առումով առավելապես գերակշռում են դիմումներն ու բողոքները, որոնք հիմնականում չեն վերածվում առաջարկների ու համագործակցության:
6. ՔՀԿ-ների գործունեության համար համայնքում առկա բարենպաստ միջավայրը և ՏԻՄ-ի կողմից համագործակցությանը միտված քաղաքականությունը ունեն մեծ պոտենցիալ բնակիչների մասնակցության խթանման առումով քայլերի իրականացման համար:

Բոլոր խնդիրների և ուղղությունների շուրջ առաջարկվում է իրականացնել հետևյալը.

1. Արմավիր համայնքի բնակչության շրջանում մասնակցային հնարավորությունների և իրավունքների մասին տեղեկատվության առավել լայն տարածման համար համագործակցել ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող ՔՀԿ-ների և երիտասարդական նախաձեռնող խմբերի հետ, որի արդյունքում փոխադարձորեն կօգտագործվեն առկա տեղեկատվության տարածման հարթակները, ինչպես նաև կրթական նյութերն ու հնարավորությունները:
2. Տարեկան բյուջեով ՔՀԿ-ներին տրամադրվող աջակցության պարագայում որպես առաջնահերթություն սահմանել համայնքի բնակիչների մասնակցային իրավունքների և հնարավորությունների մասին իրազեկման արշավների իրագործումը:
3. Սահմանել որևէ հստակ խրախուսական մրցանակ ամենաակտիվ մասնակցող քաղաքացիների համար, որը կունենա ամենամյա բնույթ և ջանքեր կգործադրվեն այդ իրադարձությանը հանրային մեծ ուշադրության հատկացման համար:
4. Անձնական շփումների միջոցով ակտիվություն ցուցաբերող քաղաքացիներին փորձել ներգրավել ինստիտուցիոնալ ընթացակարգերում համագործակցելով ավագանու անդամների և վարչական ղեկավարների հետ:
5. Ապահովել ուղիղ հեռարձակումների վերականգնումը և մշակել հանրության հետ հաղորդակցության ռազմավարություն ու հստակ չափորոշիչներ, ըստ որոնց առավել մեծ թվով դիտումներ և ներգրավում կապահովվի:
6. Համայնքի առաջնահերթությունների սահմանման, ինչպես նաև կարևոր որոշումների ընդունումից առաջ ուղիղ կամ միջնորդավորված տարբերակով իրականացնել խորհրդատվական հարցումներ, ինչը հնարավորություն կտա առավել մեծ թվով քաղաքացիների ներգրավել մասնակցային գործընթացում:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմին

ՏԻ - Տեղական ինքնակառավարում

ՀՀԶԾ - Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր

ՔՀԿ - Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ՀԿ - Հասարակական կազմակերպություն

ՏԱՊ - Տարեկան աշխատանքային պլան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2021թ.-ին Արմավիր քաղաքի հետ թվով 10 բնակավայրերի միավորմամբ տեղի ունեցած խոշորացման գործընթացից և ՏԻՄ ընտրություններից հետո Արմավիր համայնքում ձևավորվեց առանց ընդդիմադիր խմբակցության տեղական իշխանություն: Նախորդող երեք տարիների ընթացքում բյուջեի և առանձին այլ հանրային քննարկումներին բնակչության մասնակցությունը եղել է շատ ցածր ցուցանիշով: Ելնելով այս ամենից, անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել առկա իրավիճակը՝ պարզելու տեղական ինքնակառավարմանը բնակչության ցածր մասնակցության պատճառները, վերհանելու կարևոր խնդիրները, որոնք հետագա լուծման և ակտիվ աշխատանքների կարիք են ունենալու, ինչպես նաև տալու առաջարկներ՝ ուղղված իրավիճակի բարելավմանը:

Հետազոտության հիմնական 2 նպատակներն են՝

1. Պարզել, թե Արմավիր համայնքում ՏԻՄ-երը որքանո՞վ են բավարար ջանքեր գործադրում՝ բնակչության շրջանում հասանելի դարձնելու մասնակցային մեխանիզմների և հնարավորությունների մասին տեղեկատվությունը և ապահովելու բնակիչների ներգրավումը որոշումների կայացմանը:
2. Բնակչության շրջանում վերհանել այն խնդիրները և պատճառները, որոնք բացասական ազդեցություն են ունենում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության վրա:

Առաջարկվող հետազոտության կարևորությունը այն է, որ ցույց կտա՝

1. Ինչպիսի՞ գործողություններ են սահմանել և իրականացրել ՏԻՄ-երը բնակչության շրջանում մասնակցային իրավունքների և հնարավորությունների մասին տեղեկացվածության ապահովման համար:
2. Ինչպիսի՞ ռեսուրսներ են հատկացրել ՏԻՄ-երը վերոնշյալ նպատակներին հասնելու համար:
3. Բնակչության տեսանկյունից որո՞նք են տեղական ինքնակառավարմանը քաղաքացիական մասնակցության ցածր ցուցանիշի պատճառները:
4. Ինչպիսի՞ն է մասնակցության բովանդակությունը, առավելապես ֆորմալ ներկայության ապահովման խնդի՞ր է լուծվում, թե՞ ավելի խորքային/բովանդակային ու կարիքների գնահատման նպատակ է դրվում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության իրականացման համար ընտրվել են հետևյալ մեթոդները՝

1. Փաստաթղթային ուսումնասիրություն /մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 9-րդ գլուխը, «ՏԻ մասին» ՀՀ օրենքը, համայնքի ավագանու կողմից ընդունված՝ բնակիչների մասնակցության կարգերը, համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (ՀՀԶԾ-ն), տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ-ը), բյուջեն, ՏԻՄ-երի (համայնքի ավագանու և ղեկավարի) որոշումները և դրանց կատարման հաշվետվությունները, արձանագրությունները, նախորդիվ կատարված հետազոտական աշխատանքները, հրապարակված հոդվածները, զեկույցները և այլ նյութերը/:
2. Հարցազրույցներ ՏԻՄ-երի և ՔՀԿ ներկայացուցիչների հետ:
3. Ֆոկուս-խմբային քննարկումներ համայնքի բնակիչների շրջանում:

Փաստաթղթային ուսումնասիրությամբ դիտարկվել են՝ ՀՀ Սահմանադրության 9-րդ գլուխը, «ՏԻ մասին» ՀՀ օրենքը ՀՀԶԾ-ն, համայնքի վերջին երեք տարիների ՏԱՊ-երը և բյուջեները, ավագանու և համայնքապետի վերջին երեք տարիների որոշումները և դրանց կատարման արձանագրությունները, հանրային լսումների և քննարկումների մասին հաշվետվությունները, արձանագրությունները, նախորդիվ կատարված հետազոտական աշխատանքները:

Հարցազրույցները անցկացվել են Արմավիրում տեղական ժողովրդավարության ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող 2 ՔՀԿ ներկայացուցիչների՝ «Երիտասարդական Ավանգարդ» ՀԿ նախագահ Սուսաննա Մատինյանի և «Արմավիրի Զարգացման Կենտրոն» ՀԿ Ծրագրերի համակարգող Լիլիթ Գրիգորյանի, համայնքի ավագանու 2 անդամների՝ Թամարա Գրիգորյանի և Նարինե Իսկանդարյանի, ինչպես նաև համայնքապետ՝ Դավիթ Խուդաթյանի հետ: Իրականացվել է 2 ֆոկուս խմբային քննարկում՝ յուրաքանչյուրում ներգրավելով 6 մասնակից՝ նույն տարիքի և համամասնորեն բոլոր բնակավայրերից:

ԳԼՈՒԽ 1. ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԻ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄՇԱԿՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1.1. Արմավիրի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքի և համացանցային այլ աղբյուրների, հարթակների և գործիքների միջոցով բնակիչների իրազեկման ուսումնասիրության արդյունքներ.

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը[1] սահմանում է՝
«Ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը: Հրապարակումն իրականացվում է համայնքներում՝ համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում: 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում այդ տեղեկությունը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցներով կամ համացանցով, այդ թվում՝ համայնքի պաշտոնական համացանցային կայքի միջոցով»:

Ըստ Արմավիրի համայնքապետարանի պաշտոնական կայքի մոնիտորինգից ստացված տվյալների՝ 2022 թվականի ընթացքում կայքում տեղադրվել են թվով 22 հայտարարություն, որից 13-ը ավագանու նիստերի, 6-ը հանրային քննարկումների և լսումների, 2-ը համայնքային ընդհանուր ժողովների, 1-ը գաղափարների ընտրության ժողովի վերաբերյալ են: Ուսումնասիրելով ավագանու նիստերի մասին արձանագրությունները՝ նկատում ենք, որ ավագանու նիստերի մասով բնակչության կողմից մասնակցության, առաջարկների և խնդիրների մասին հիշատակումներ չկան: Սակայն հանրային քննարկումների և մյուս հանդիպումների արձանագրություններով նշվում է, որ դրանց մասնակցել են բնակիչներ և ծավալվել է ակտիվ քննարկումներ, բայց մասնակիցների թվի կամ նրանց կողմից բարձրաձայնված խնդիրների ու առաջարկների մասին որևէ բան չի ներկայացվում:

Ավագանու նիստերի մասին ***տեղեկատվությունները հրապարակվել են՝ պահպանելով օրենսդրական պահանջները***, հրապարակումները տեղի են ունեցել նիստերից առնվազն 7 օր առաջ, բացառությամբ այն դեպքերի, երբ նիստերը եղել են արտահերթ կարգով:

2020թ.-ի հունվարից մինչև 2023թ.-ի փետրվար ամիսը տեղի են ունեցել համայնքի ավագանու թվով 37 նիստեր[2], որոնցից 28-ը արտահերթ, այսինքն՝ շուրջ 75% դեպքերում նիստերը կայացել են արտահերթ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ի 9-րդ կետով[3] սահմանվում է՝

---

[1] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք 12-րդ հոդված
https://www.arlis.am/documentview.aspx?docID=73271
[2] Ավագանու նիստերի մասին տեղեկատվությունը համայնքապետարանի կայքում,
https://armavircity.am/Pages/DocFlow/Default.aspx?dt=Council&Grd=Page$1
[3] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք հոդված 16, կետ 9-րդ
https://www.arlis.am/documentview.aspx?docid=119090

«Անկախ բնակչության քանակից համայնքներում ավագանու հրապարակային նիստերը առցանց հեռարձակվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում»:

Սա իրենից ենթադրում է, որ Արմավիր խոշորացված համայնքի պաշտոնական կայքում պետք է առցանց հեռարձակվեն ավագանու նիստերը:

Ուսումնասիրության արդյունքում (22.02.2023թ.) պարզ դարձավ, որ համայնքապետարանի պաշտոնական կայքում կա առանձին բաժին, որը հատկացված է ավագանու նիստերի առցանց հեռարձակմանը, սակայն ***ավագանու նիստերի առցանց հեռարձակումները ներկա պահին չեն իրականացվում***: Նշված բաժնում առկա չեն հեռարձակված տեսանյութերը, իսկ սպասվող ավագանու նիստի մասին տվյալները բավականին հին են, վերջինը՝ 2022թ.-ի մայիսի 25-ի թարմացմամբ:

Համայնքային կայքում ստեղծվել է մասնակցային կառավարումը խթանելու նպատակով մշակված էլեկտրոնային գործիք՝ «Մասնակցիր համայնքի զարգացմանը» կայքի պատուհանով[4], որտեղ բնակիչները կարող են ներկայացնել համայնքի զարգացման շուրջ իրենց առաջարկները, մեկնաբանել դրանք: Գործիքը նաև քվեարկության միջոցով համայնքային զարգացման նախագծեր ընտրելու համար է, ըստ որի ամենաշատ ձայներ հավաքած նախագծերին տրամադրվելու են ֆինանսական հատկացումներ: Գործիքի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ, ըստ պաշտոնական վիճակագրության, ***առկա են 0-ական ցուցանիշներ***՝ «առաջարկներ» և «հավանումներ» դաշտերում, և ամբողջ համայնքից էլեկտրոնային գործիքում գրանցվել է ընդամենը 83 քաղաքացի: 25.02.2023թ.-ին համայնքապետարանը մեկնարկել է հարթակի առաջին գործընթացը, ըստ որի՝ բնակիչների կողմից հավանություն ստացած լավագույն առաջարկին տրամադրվելու է 1.000.000 ՀՀ դրամ գումար: Այս գործընթացը համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 26-ի N 216-Ա որոշման հիման վրա է մեկնարկել, որին նախորդել էր Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստի թիվ 004-Ա որոշումը, ինչի շրջանակներում էլ որոշում է կայացվել՝ ստեղծելու վերոնշյալ հարթակը:

Պարզելու համար, թե արդյո՞ք Արմավիր խոշորացված համայնքի ղեկավարը, ղեկավարի առաջին տեղակալը և ավագանու անդամները իրականացնում են որոշակի կոչեր բնակչության մասնակցությունը համայնքային կյանքում բարձրացնելու համար, վերջին մեկ տարվա կտրվածքով ուսումնասիրեցինք նրանց ֆեյսբուքյան անձնական էջերը: Նրանցից մի քանիսի անձնական էջերում համայնքում արդեն տեղի ունեցած հանրային քննարկումների, լսումների կամ ավագանու նիստերի մասին տեղեկատվություններ կային, սակայն, ինչ վերաբերվում է հրապարակումներին, որոնց միջոցով ***կոչեր կլինեին մասնակցել սպասվող ավագանու նիստերին, հանրային քննարկումներին, լսումներին և այլն, բացակայում են***:

[4] «Մասնակցիր համայնքի զարգացմանը» կայքի պատուհան
https://armavircity.am/Pages/DocFlow/Default.aspx?nt=1&a=l&dt=as_process&tv=-4

Եզրակացություններ

1. Ըստ ուսումնասիրության՝ համայնքում հանրային քննարկումները և լսումները իրականացվում են պատշաճ ընթացակարգով և, ըստ դրանց արձանագրությունների, բնակիչները ցուցաբերում են մասնակցություն, սակայն ընդհանուր ձևակերպումներից պարզ չի դառնում նրանց կողմից ներկայացված հարցերի ու առաջարկների ողջ շրջանակը:
2. Ավագանու նիստերի արձանագրություններում առկա չեն բնակիչների մասնակցության մասին հիշատակումներ կամ նրանց կողմից բարձրաձայնված հարցերի մասին տեղեկատվություն:
3. Ավագանու նիստերի մասին տեղեկատվությունները հրապարակվել են՝ պահպանելով օրենքի կարգավորումները, սակայն վերջին երեք տարիների նիստերի 75%-ը եղել են արտահերթ, ինչը բացասական ցուցանիշ է, որի պատճառով բնակիչները կարող են դժվարություններ ունենալ՝ մասնակցության հետ կապված:
4. Համաձայն օրենքի, Արմավիր համայնքի կայքում ավագանու նիստերի ուղիղ հեռարձակում պետք է իրականացվի, սակայն պաշտոնական կայքում այդ մասին տեղեկատվություն առկա չէ:
5. Համայնքային իշխանությունները սոցցանցերում ակտիվորեն տարածում են ՏԻ-անը բնակչության մասնակցության հնարավորությունների մասին տեղեկատվությունը, սակայն որևիցե կոչերով կամ ուղերձներով հանդես չեն գալիս, որպեսզի բնակիչները ակտիվորեն մասնակցեն համայնքի կառավարման և զարգացման միջոցառումներին:

1.2. Արմավիր համայնքում բնակիչների մասնակցության թեմայով նախորդ տարիներին իրականացված հետազոտությունների ուսումնասիրություն

Կատարվել է Արմավիրում գործող հասարակական կազմակերպությունների կողմից կատարված նմանատիպ աշխատանքների ուսումնասիրություն, հասկանալու համար՝ կա՞ն արդյոք նախկինում արված հետազոտություններ բնակչության մասնակցության վերաբերյալ: Ուսումնասիրել ենք ՄԻՏՔ ՀԿ-ի կողմից արված հետազոտությունը՝ «Արմավիրի մարզի երիտասարդների խնդիրները և հասարակական, քաղաքական ակտիվության մակարդակը»[5]: Սույն հետազոտության մեջ ներառված է երիտասարդների մասնակցության մասին տվյալներ համայնքի հասարակական, քաղաքական կյանքին: Երիտասարդների տարիքային խմբերը եղել են 16-20, 21-25 և 26-30 տարեկան, հարցերի պատասխանները՝ երբեք, հազվադեպ, հաճախ: Հետազոտության ընթացքում արված հարցումներից է «Ինչպիսի՞ հաճախականությամբ եք մասնակցել կամ ներգրավված եղել համայնքի ավագանու նիստերին» (Գծապատկեր 1):

Ըստ հարցումների արդյունքների, ***երբեք է պատասխանել Արմավիր խոշորացված համայնքի 16-20 տարիքային խմբին պատկանող երիտասարդների 82.8%-ը, 21-25 տարիքային խմբին պատկանող երիտասարդների 80%-ը, 26-30 տարիքային խմբին պատկանողների 88%-ը:***

[5] «Արմավիրի մարզի երիտասարդների խնդիրները և հասարակական, քաղաքական ակտիվության մակարդակը» հետազոտություն: https://drive.google.com/file/d/196ZOjqNvbbrApEuKNUNKi7ng04ZtWbSd/view?usp=sharing

Գծապատկեր 1.



Հազվադեպ է պատասխանել 16-20 տարիքային խմբի 17.2%-ը, 21-25 տարիքային խմբի 17.8%-ը և 12%-ը՝ 26-30 տարիքային խմբին պատկանող երիտասարդներից:

Առավել քիչ է ընտրված ***հաճախ*** պատասխանը: 21-25 տարիքային խմբի երիտասարդների միայն 2.2%-ն է ընտրել այս տարբերակը, իսկ ահա 16-20 և 26-30 տարիքային խմբերի մոտ այս տարբերակի ընտրությունը բացակայում է՝ 0%:

Հաջորդ հարցը, որին անդրադարձել են սույն հետազոտությունում, այն է՝ «Ի՞նչ հաճախականությամբ եք մասնակցել կամ ներգրավված եղել՝ Հանրային լսումներին/քննարկումներին» (Գծապատկեր 2):

Գծապատկեր 2.



Ըստ հարցումների արդյունքների, ***երբեք*** է պատասխանել Արմավիր խոշորացված համայնքի 16-20 տարիքային խմբին պատկանող երիտասարդների 66.4%-ը, 21-25 տարիքային խմբին պատկանող երիտասարդների 64.4%-ը, 26-30 տարիքային խմբին պատկանողների 76%-ը:

Հազվադեպ է պատասխանել 16-20 տարիքային խմբի 28.1%-ը, 21-25 տարիքային խմբի 28.9%-ը և 24%-ը՝ 26-30 տարիքային խմբին պատկանող երիտասարդներից:

Հաճախ է պատասխանել 16-20 տարիքային խմբի 5.5%-ը, 21-25 տարիքային խմբի երիտասարդների 6.7%-ը, իսկ 0%-ը՝ 26-30 տարիքային խմբի երիտասարդների:

Հետազոտության ընթացքում, բացի սոցիոլոգիական հարցումներից, իրականացվել են նաև ֆոկուս խմբային քննարկումներ, որոնց մասնակցել են Արմավիր մարզի 16-30 տարեկան երիտասարդները:

Ֆոկուս խմբային քննարկման թեմաներից են երիտասարդների մասնակցությունը համայնքի հասարակական, քաղաքական գործընթացներին և երիտասարդների ու ՏԻՄ-երի համագործակցության հնարավորությունները:

Մասնակիցների մեծամասնությունը նշել է, որ երիտասարդները, նույնիսկ այն դեպքերում, երբ ունեն մոտիվացիա մասնակցելու համայնքի ամենատարբեր հասարակական-քաղաքական գործընթացներին, չեն կարողանում մասնակցել, քանի որ բավարար չափով տեղեկատվություն չունեն դրանց վերաբերյալ:

Բացի «ՄԻՏՔ» ՀԿ-ի կողմից արված հետազոտությունից, ուսումնասիրել ենք նաև Արմավիր համայնքում գործող «Երիտասարդական ավանգարդ» ՀԿ-ի և «Արմավիրի Զարգացման Կենտրոն» ՀԿ-ի կողմից կատարված աշխատանքները, ինչպես նաև իրականացրել ենք համացանցային մոնիթորինգ, սակայն այս թեմայով այլ հետազոտություններ և տվյալներ չեն գտնվել:

Եզրակացություններ

1. Արմավիր համայնքում 16-30 տարեկան երիտասարդները զգալի պասիվություն են ցուցաբերում ավագանու նիստերին մասնակցության հարցում:
2. Հանրային քննարկումներին և լսումներին մասնակցության հարցում երիտասարդների պասիվությունը, ի համեմատ ավագանու նիստերի, կարող ենք գնահատել՝ միջին:
3. Արմավիր համայնքում չեն իրականացվում բավարար թվով հետազոտական և մշտադիտարկման աշխատանքներ, որոնք ՏԻՄ-ՔՀԿ համատեղ ջանքերով կնպաստեն տեղական ժողովրդավարության զարգացմանը և դրա համատեքստում ՏԻ-անը բնակչության մասնակցության աստիճանի բարձրացմանը:

1.3. Արմավիր համայնքում բնակչության մասնակցության վերաբերյալ ՏԻՄ-երի կողմից կայացված որոշումների և դրանց կատարման ուսումնասիրության արդյունքներ

Արմավիր խոշորացված համայնքում բնակիչների մասնակցությունը կարգավորվում է հիմնական երեք կարգերով՝ «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգ»[6], «Համայնքում հանրային բաց լսումների և(կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»[7] և «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը»[8], որոնք սահմանված են համապատասխան որոշումներով: Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստի թիվ 004-Ա որոշմամբ («Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգ») սահմանվում է Արմավիր համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության հետ կապված հիմնական հարաբերությունները: Մասնավորապես, որոշման մեջ նշվում է, որ պետք է կարգավորել համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության հետ կապված հարաբերությունները, ապահովել համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների, ոչ ֆորմալ խմբերի լիարժեք և ժամանակին մասնակցությունն ու ներգործությունը համայնքային քաղաքականությունների մշակման և որոշումների կայացման գործընթացում՝ երաշխավորելով հանրային տեղեկատվության լիակատար թափանցիկությունն ու մատչելիությունը:

[6] «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգ» https://armavircity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=6760189f-b28e-466c-91b8-9d9a5bbbe4f9
[7] «Համայնքում հանրային բաց լսումների և(կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը» https://armavircity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=ccb5700a-95ab-4f68-95ac-6c814e6f8e91
[8] «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը» https://armavircity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=5ed8e9ff-f8ec-4a72-88ee-4aecd4cf615d

Վերոնշյալ որոշմամբ սահմանվել է, որ այդ բնագավառում առաջիկա հիմնական խնդիրներն են՝

1. հստակեցնել համայնքի մասնակցային կառավարման համակարգում շահագրգիռ բոլոր կողմերի դերերը և պարտականությունները.
2. համայնքում հիմնել և կիրառել բնակիչների մասնակցության գործուն կառուցակարգեր.
3. ձևավորել համայնքի կառավարման նոր, քաղաքացիամետ մոտեցումներ.
4. բնակիչների համար ստեղծել հնարավորություններ՝ ունենալու ակտիվ դեր համայնքի կառավարման ու զարգացման գործում.
5. համայնքում ապահովել փոխվստահության մթնոլորտ.
6. պայմաններ ստեղծել համայնքում առկա շահերի հավասարաչափ ներկայացումը և հավասարակշռումը որոշումների կայացման գործընթացում:

Որոշման մեջ հիմնական օգտագործվող հասկացություններն են՝ մասնակցային ժողովրդավարություն, բնակիչների մասնակցություն, բնակիչների նախաձեռնություն, ընդունելություններ և «բաց դռների» ծրագրեր: Ըստ որոշման, մասնակցությունը ավելի խրախուսելու նպատակով, սահմանվել է «Համայնքի ակտիվ բնակիչ» խրախուսական մրցանակ: Ավագանին մրցանակը շնորհում է տվյալ տարվա ընթացքում համայնքում տեղական ինքնակառավարմանը ամենաակտիվ մասնակցությունը ցուցաբերած բնակիչների կամ ոչ ֆորմալ խմբի ներկայացուցչին:

Ուսումնասիրությամբ վերոնշյալ որոշման կատարման հետ կապված փաստաթղթեր չգտնելով՝ համայնքի ղեկավարին ուղարկվել է հարցում[9] հետևյալ հարցերի շուրջ՝

Հարց 1. Ի՞նչ գործողություններ են իրականացվել ավագանու որոշման մեջ շեշտված կետերի իրագործման ուղղությամբ:
Հարց 2. Բնակիչների մասնակցության ինչ՞ գործուն կառուցակարգեր են ստեղծվել:
Հարց 3. Խրախուսվե՞լ են արդյոք ամենաակտիվ մասնակցություն ունեցած բնակիչները:

Հարցմանը ի պատասխան՝ Արմավիր համայնքի ղեկավարը պատասխանեց[10], որ տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության հետ կապված հարաբերությունների վերաբերյալ մեր իսկ կողմից նշված Արմավիր համայնքի ավագանու համապատասխան որոշումը հրապարակված է Արմավիրի համայնքապետարանի պաշտոնական կայքում և իրավունքների իրականացման հետ կապված՝ համայնքի բնակիչները, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունները կարող են լիարժեքորեն ծանոթանալ և համապատասխան մասնակցություն ցուցաբերել համայնքի տեղական ինքնակառավարմանը:

[9] Համայնքի ղեկավարին ուղարկված հարցում https://drive.google.com/file/d/1lUMf-Vujz2_kSqeJgn8j_tTGlXNGpHAq/view?usp=sharing
[10] Արմավիր համայնքի ղեկավարը պատասխանը https://drive.google.com/file/d/1n2jPxUdfrMHb1IAWX_Tc0QeLIQgogVlK/view?usp=sharing

Միաժամանակ տեղեկացվում է, որ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով պարբերաբար Արմավիրի համայնքապետարանի կողմից կազմակերպվում են հանրային քննարկումներ, որոնց կազմակերպման և անցկացման վերաբերյալ տեղեկատվություն և հայտարարություն է հրապարակվում Արմավիրի համայնքապետարանի պաշտոնական կայքում:

Համայնքի բնակիչների և համայնքապետարանի արդյունավետ փոխգործակցության, նախագծերի և գաղափարների հայտնաբերման, առաջարկների ներկայացման և քննարկման նպատակով, Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով ստեղծվել է մասնակցային կառավարումն ապահովող «Մասնակցել համայնքի զարգացմանը» պատուհանով հարթակ, որը տեղ է գտել Արմավիրի համայնքապետարանի պաշտոնական կայքում, և այն միջավայր է, որը համայնքի կառավարման և զարգացման բարելավմամբ հետաքրքրված մարդկանց հնարավորություն է տալիս իրենց մասնակցությամբ ստեղծել ակտիվ քաղաքացիների համայնք:

Այս գործիքի իրականացման հետ կապված՝ առանձնացվել է նաև «Մասնակցային բյուջե» էլեկտրոնային գործիքը, որի ծախսման ոլորտը կորոշվի այս հարթակում բնակիչների կողմից բարձրացված հարցերի քննարկման արդյունքում:

Եզրակացություններ

1. Որպես ՏԻ-անը բնակիչների մասնակցության գործուն կառուցակարգ, ներկայացվում է «Մասնակցել համայնքի զարգացմանը» պատուհանով էլեկտրոնային գործիքը, սակայն ինչպես արդեն անդրադարձել ենք նախորդիվ՝ ***համայնքում բնակիչների մասնակցության ցուցանիշները առայժմ 0-ական են և, որպես կառուցակարգ, այն դեռևս չենք կարող համարել գործուն***, սակայն կարևոր է նշել, որ արդեն մեկնարկել է առաջին գործընթացը և այս մասով համայնքապետարանը ջանքեր է գործադրում գործիքի ներդրման և առաջխաղացման համար:
2. Համայնքի ղեկավարի պատասխանում չկա անդրադարձ այն մասին, թե արդյո՞ք խրախուսական մրցանակ ստացել են ամենաակտիվ մասնակցություն ունեցած բնակիչները: Ինչպես պարզվեց արդեն ՏԻՄ-երի ներկայացուցիչների հետ հարցազրույցներից, այդպիսի մեխանիզմ դեռևս չի կիրառվել, ինչը ևս ***կարող էր դրական խթան հանդիսանալ ՏԻ-անը բնակիչների մասնակցության գործում***:

Ամփոփում

Ամփոփելով կատարված ուսումնասիրությունները՝ կարող ենք վերհանել հետևյալ կարևոր խնդիրները, որոնց հետագա լուծման և ակտիվ աշխատանքների կարիք են ունենալու.

1. Համայնքում անցկացված հանրային լսումների, քննարկումների և ավագանու նիստերի արձանագրությունների մասով կարիք կա հստակ ձևակերպելու բնակիչների ներկայացրած խնդիրներն ու առաջարկները:

2. Ավագանու նիստերի կազմակերպման հարցերում անհրաժեշտություն է զգացվում քայլեր ձեռնարկել արտահերթ նիստերին բնակիչների մասնակցության առումով առաջ եկող խնդիրների լուծման համար:
3. Ըստ օրենքի պահանջի՝ պետք է իրականացնել ավագանու նիստերի հեռարձակումը համայնքի պաշտոնական կայքում:
4. ՏԻՄ-երի ներկայացուցիչների և համայնքապետարանի աշխատակիցների կողմից առավել մեծ ջանքերի գործադրման կարիք է զգացվում սոցցանցերում և առցանց տարբեր հարթակներում՝ համայնքի բնակիչներին ՏԻ-անը մասնակցության հնարավորությունների հետ ծանոթացնելու և ներգրավելու համար:
5. ՏԻՄ-ՔՀԿ ջանքերով կարիք կա խթանիչ աշխատանքներ իրականացնել համայնքի երիտասարդների նկատելի պասիվությունն ու անտարբերությունը կրճատելու և բեկում մտցնելու ուղղությամբ:
6. Անբավարար են համայնքում տեղական ժողովրդավարության զարգացմանն ու այդ համատեքստում ՏԻ-անը բնակիչների մասնակցության խթանմանն ուղղված մշտադիտարկումներն ու հետազոտությունները:
7. Հարկավոր է առավել մեծ ջանքեր գործադրել «Մասնակցել համայնքի զարգացմանը» էլեկտրոնային գործիքի մասին բնակչության շրջանում տեղեկատվության տարածման և նրանցից մեծ թվով առաջարկների հավաքագրման ուղղությամբ:
8. Ավագանու որոշմամբ սահմանված խրախուսական մրցանակների շնորհման մեխանիզմի կիրառումը կարևոր քայլ կլինի համայնքում մասնակցային մշակույթի զարգացման համար:

ԳԼՈՒԽ 2. ՖՈԿՈՒՍ-ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ, ՔՀԿ ԵՎ ՏԻՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2.1. Ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքներ

Իրականացված ֆոկուս-խմբային քննարկումների (Հավելված 1) արդյունքներով Արմավիր խոշորացված համայնքում տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցությունը ստացել է միջին-ցածր գնահատական հարցվողների մեծամասնության կողմից (3-5 բալ առավելագույն 10-ից): Որպես ցածր մասնակցության պատճառ հարցվողները նշել են բնակիչներ-ՏԻՄ թույլ կապերը և տեղեկացվածության պակասը:

Առաջին պատճառի մասով մեծամասնությունը նշեց, որ խնդիրը երկկողմանի է, համայնքի բնակիչները ավելի շատ կենտրոնացած են իրենց անձնական խնդիրներով, իսկ արդեն ՏԻՄ-երի մասով բավարար ջանքեր չեն գործադրվում կապի ամրապնդման համար: Դե իսկ տեղեկացվածության մասով նշվեց, որ շատերը տեղյակ չեն համայնքային կայքի մասին, իսկ միայն ֆեյսբուքյան հարթակի հայտարարությունները ոչ բոլոր քաղաքացիներին են հասանելի:

Լուծումների առումով քննարկումների մասնակիցները ներկայացրեցին հետևյալ առաջարկները.

1. Ավագանու անդամները առավել շատ հանդիպումներ ունենան բնակիչների հետ՝ բակերում, բնակավայրերի հավաքատեղիներում և տարբեր կենտրոններում, ինչի շրջանակներում հնարավոր կլինի ամրապնդել բնակիչների հետ կապը, ինչպես նաև ներկայացնել մասնակցային հնարավորություններն ու դրանց կարևորությունը:
2. Համացանցային հրապարակումների միջոցով տարածվող տեղեկատվության հետ մեկտեղ ներկայացվեն նաև բնակիչների մասնակցային իրավունքները և դրա կարևորությունը համայնքի համար: Այս մասով հատկանշական է մասնակիցներից մեկի (ուսուցիչ, Խանջյան բնակավայրից) հետևյալ պնդումը.

«Մշտապես պետք է տեղեկացնեն, որ բնակիչները կարող են գալ և մասնակցել քննարկումներին, նիստերին: Անընդհատ պետք է ցույց տան, որ ժողովրդի ձայնը կարևոր է»:

ՏԻՄ-երի կողմից կազմակերպված որևէ քննարկումների կամ հանդիպումների մասնակիցների մեծամասնությունը չէին մասնակցել կամ մասնակցելու դեպքում միայն մեկ անգամ՝ հանրային քննարկման: Մյուսները նշեցին, որ ՔՀԿ-ների և դպրոցի համագործակցությամբ միայն դպրոցական տարիքում են մասնակցել ավագանու նիստերին, սակայն հիմնականում պարզապես ունկնդրի դերում: Այս համատեքստում մասնակիցները օրենքով նախատեսված հանրային մասնակցության ձևաչափերից իրենց արդյունավետությամբ առանձնացրեցին ***հանրային քննարկումները և առցանց գործիքների կիրառումը***: Վերջինի մասով նշեցին, որ ընդունվող կարևոր որոշումների մասով կարելի է առցանց հարցումների բաղադրատարր ունենալ:

ՏԻՄ-երի կողմից ձեռնարկված միջոցառումների մասին մասնակիցների ճնշող մեծամասնությունը տեղեկացել էր ֆեյսբուքից և որոշակիորեն իրենց բնակավայրի ավագանու անդամից: Հիմնական միջոցառումները, որոնց մասին տեղեկացել և մասնակցել էին, եղել են բնակավայրերում տեղի ունեցող հանդիպումները համայնքապետի հետ: Այս համատեքստում ՏԻՄ-երի աշխատանքը ստացել է միջին-բարձր գնահատական հարցվողների մեծամասնության կողմից (6-7 բալ առավելագույն 10-ից):

Բնակիչները կողմից առկա խնդիրների բարձրաձայնման և առաջարկությունների ներկայացման հետ կապված՝ նշվեց, որ չնայած նրան, որ խնդիրների մասով բարձրաձայնումներ կատարվում են, սակայն այդ բարձրաձայնումները կատարվում են բնակավայրի վարչական ղեկավարի հետ անձնական շփումների միջոցով, այլ ոչ առկա մասնակցային մեխանիզմներով: Իսկ ընդհանուր առմամբ, նկատվում է պասիվություն, որը արտահայտվում է մասնակիցներից մեկի (համայնքի բնակիչ, Սարդարապատ բնակավայրից) հետևյալ պնդումով՝

«Որպեսզի բնակիչներն ակտիվորեն մասնակցեն և բարձրաձայնեն առկա խնդիրները, անհրաժեշտ է հանրային տեղեկացվածություն, ինչը մեր համայնքում ցածր մակարդակի վրա է»:

Մասնակիցները նաև նշեցին, որ այն բոլոր քննարկումների կամ ծրագրերի մասով, որոնց մասնակցել են, տեղեկատվությունը եղել է հանրամատչելի և հասկանալի, սակայն պայմանավորված իրենց բնակավայրերում համայնքային կայքի քիչ օգտագործմամբ և ֆեյսբուքյան հարթակում ոչ բոլորի հասանելիությամբ՝ հանրամատչելիությունը տուժում է:
ՏԻՄ-երի հետ երբևէ որևէ տարբերակով համագործակցության մասով մասնակիցների մեծամասնությունը նշեց, որ չեն եղել այդպիսիք: Հիմնական մասնակցության եղանակները եղել են դիմումների կամ բնակավայրի վարչական ղեկավարի միջոցով պարզապես հարցերի ու խնդիրների բարձրաձայնումը, որը չի ենթադրել համագործակցություն: Բնակիչները հիմնականում դիմել են աղբահանության, զբոսայգիների բարեկարգման և մանկապարտեզի հարցերով: Բոլոր հարցերին ընթացք է տրվել կամ խոստացվել են լուծումներ: Արդյունքներ ևս եղել են՝ տարբեր բնակավայրերում ներկայումս կառուցվում են մանկապարտեզներ, բարեկարգվել են զբոսայգիներ և որոշակիորեն բարելավվել է աղբահանության վիճակը:

Ամփոփում

1. Ըստ ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցների՝ ՏԻ-անը բնակիչների մասնակցությունը ցածր մակարդակի վրա է, որի հիմնական պատճառները բնակչության տեղեկացվածության ոչ բավարար մակարդակն է իրենց մասնակցային իրավունքների վերաբերյալ և ՏԻՄ-երի կողմից անբավարար աշխատանքը բնակիչներ-ՏԻՄ կապի ամրապնդման տեսանկյունից:
2. Մասնակցության ձևաչափերից իրենց արդյունավետությամբ առանձնացվեցին հանրային քննարկումները և օնլայն գործիքների կիրառումը, մասնավորապես, կարևորվեց հարցումների իրականացումը:
3. Համայնքում տեղի ունեցող միջոցառումների և հանդիպումների վերաբերյալ բնակչությունը հիմնականում տեղեկանում է ֆեյսբուքյան հարթակից և որոշակիորեն

իրենց բնակավայրերի ավագանու անդամներից: Այդ մասով ՏԻՄ-երի իրազեկողական գործառույթների իրականացումը բնակիչները գնահատում են միջինից բարձր:

4. Մասնակցային իրավունքների և մեխանիզմների մասին տեղեկացվածության ցածր մակարդակի պատճառով խնդիրների բարձրաձայնման և առաջարկների ներկայացման գործընթացը ծավալվում է անձնական շփումների և հանդիպումների մակարդակում:
5. ՏԻՄ-երի կողմից ներկայացվող տեղեկատվությունը հասկանալի է և մասամբ հանրամատչելի, որը պայմանավորված է համայնքային կայքի քիչ օգտագործմամբ և ֆեյսբուքյան հարթակում ոչ բոլորի հասանելիությամբ:
6. Գրանցված դեպքերում մասնակցության գործընթացը դրսևորվում է խնդիրների բարձրաձայնման և դիմումների ներկայացման մակարդակում և անցում չի կատարվում առաջարկների ներկայացման ու համագործակցության մակարդակի:
7. ՏԻՄ-երին ներկայացվող խնդիրներն ու դիմումները հիմնականում ստանում են բավարար արձագանք և համապատասխան լուծումներ:

2.2. ՔՀԿ ներկայացուցիչների հետ հարցազրույցների արդյունքներ

Արմավիրում տեղական ինքնակառավարման ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող ՔՀԿ ներկայացուցիչների հետ իրականացված հարցազրույցի(Հավելված 3) արդյունքներով հանրային մասնակցությունը ավագանու նիստերին և հանրային քննարկումներին ստացավ միջին-ցածր գնահատական (4 բալ առավելագույն 10-ից), սակայն նշվեց, որ առցանց հարթակում և անձնական հանդիպումների մակարդակում բնակիչները առավել ակտիվ են ու բարձրաձայնում են իրենց խնդիրները: Նշվեց նաև, որ չնայած մասնակցության մակարդակը ցածր է, սակայն մասնակիցները մշտապես գալիս են իրենց հուզող հարցերով ու մասնակցության բնույթը չենք կարող համարել ֆորմալ:

Պարզ դարձավ, որ չի իրականացվել այնպիսի հետազոտություն, որը կուսումնասիրեր համայնքի բնակիչների ընդհանուր մասնակցության տվյալները: Միայն «Երիտասարդական Ավանգարդ» ՀԿ-ն ուսումնասիրել է համայնքի ազգային փոքրամասնությունների մասնակցությունը ՏԻ գործընթացներին և պարզ է դարձել, որ այնտեղ նույնպես մասնակցության մակարդակը ցածր է:

ՏԻՄ-երի աշխատանքը, բնակիչների մասնակցությունը խթանելու հետ կապված, դրական գնահատվեց և նշվեց, որ մշտապես ցուցանակների, կայքի և ֆեյսբուքյան հարթակի միջոցով իրականացվում է անհրաժեշտ իրազեկողական գործողություններ: Այդ համատեքստում ՏԻՄ-երի աշխատանքը գնահատվեց միջին-բարձր (7-8 բալ առավելագույն 10-ից):

Պարզ դարձավ, որ երկու ՔՀԿ-ներն էլ մշտապես համագործակցում են ՏԻՄ-երի հետ: «Արմավիրի Զարգացման Կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչը մեկնաբանեց նաև հետևյալը.

«Արմավիրի Զարգացման Կենտրոնի մեծ ցանկությունն է ՏԻՄ-երին ակտիվացնելը և քաղհասարակության դերի բարձրացումը ՏԻՄ-երի աչքերում: Այս պահին «Բաց կառավարման գործընկերություն» ծրագրում ներառված է Արմավիր քաղաքը, որը հենց մեր նախաձեռնությունն

է: Շուտով այդ գործընթացը ավելի տեսանելի կլինի, երբ որ Արմավիր քաղաքում բաց կառավարումը ավելի ակնառու կլինի, այսինքն՝ համայնքապետարանը հանձնառություններ կվերցնի հանրության կարծիքներով և դրանք կիրականացնի»:

«Արմավիրի Զարգացման Կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչը նշեց նաև, որ իրենք ՏԻՄ-երի հետ համագործակցությամբ նախաձեռնել էին համայնքում երիտասարդական ռազմավարության մշակման գործընթաց, որը սակայն, համաճարակի և այլ գործոններով պայմանավորված, կանգ առավ և այդպես էլ չշարունակվեց:

«Երիտասարդական Ավանգարդ» ՀԿ-ի ներկայացուցիչը նշեց, որ իրենց կազմակերպությունը մշտապես մասնակցում է ավագանու նիստերին և փորձում են պարզաբանել թերի հարցերը ու հստակեցնել դրանք: Նրանք իրականացրել են ավագանու նիստերի ուղիղ հեռարձակումներ, մասնակցել են նաև համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կազմման աշխատանքներին, հանդես են եկել առաջարկություններով: Բնակչության մասնակցության ոչ այդքան բարձր ցուցանիշի պատճառների մասով «Երիտասարդական Ավանգարդ» ՀԿ-ի ներկայացուցիչը մեկնաբանեց հետևյալը.

«Կարծում եմ դա կապված է ներկայիս համայնքապետի առավել հասանելի լինելու հետ, իսկ նախկինում ավելի փակ է եղել ամեն ինչ, դրա համար ցածր է եղել մասնակցությունը: Մեր կազմակերպությունը արեց և անում է ամեն ինչ, որ կոտրի այդ կարծրատիպերը և մարդիկ հասկանան, որ կարող են գալ և մասնակցել: Պետք է ավելի շատ բնակիչներին բացատրել իրենց իրավունքների և իրենց ձայնի կարևորության մասին: Թեկուզ ոչ ֆորմալ հանդիպումներով, բակային այցերով»:

«Արմավիրի Զարգացման Կենտրոն» ՀԿ ներկայացուցիչն էլ՝ խոսելով պատճառների մասին, նշեց.

«Գլխավոր պատճառներից մեկն այն է, որ սովորական քաղաքացին մտածում է՝ ես ընտրել եմ համայնքը կառավարողին, իմ պարտքը կատարել եմ ու վերջ, բայց ընտրելուց հետո գիտեն մեկ էլ բողոքելը, բայց այդ երկուսի մեջտեղում ուրիշ որևէ գործիքի չեն տիրապետում»:

Որոշումների ընդունման գործընթացներում ՔՀԿ-ների մասնակցության, համայնքապետարանի աշխատանքների նկատմամբ վերահսկողության և ջատագովության իրականացման վերաբերյալ «Երիտասարդական Ավանգարդ» ՀԿ-ի ներկայացուցիչը նշեց, որ իրենց ՔՀԿ-ն ոչ միայն մասնակցում է, այլ վերահսկողական (մոնիթորինգի) գործառույթ է իրականացնում համայնքային աշխատանքներին: 2017թ.-ին ունեցել են հետազոտություն ավագանու անդամների և նրանց գործառույթների վերաբերյալ: Դիտարկվել են համայնքի զարգացման ծրագրերն ու աշխատանքային պլանները, նաև տարբեր փաստաթղթեր, ավագանիների բացակայությունների վերաբերյալ և այլն:

«Արմավիրի Զարգացման Կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցչի մեկնաբանմամբ.

«Բոլորն էլ իրականացնում են, բայց եթե նկատի ունենք գրանցված ՀԿ-ներին, կան շատ գրանցված ՀԿ-ներ, բայց երբ որ համեմատում ենք իրենց քանակը և իրականացվելիքները, դառնում է՝ զրո: Բայց նաև հաշվի առնենք, որ տարբեր ՀԿ-ներ տարբեր գործառույթներ և աշխատանքային ոլորտներ ունեն, այսինքն՝ իրենց չի վերաբերում այս ամենը: Չեմ կարող ասել, որ չեն մասնակցում, կան, բայց համեմատելով ՀԿ-ների քանակի հետ՝ դա շատ քիչ է»:

Ամփոփում

1. Ըստ ՔՀԿ ներկայացուցիչների՝ ՏԻ-անը բնակիչների մասնակցությունը ցածր մակարդակի վրա է, որի հիմնական պատճառները մասնակցային մեխանիզմների մասին բնակիչների ցածր տեղեկացվածությունն է և սեփական մասնակցության կարևորության ոչ բավարար գիտակցումը:
2. ՏԻՄ-երը բաց են ՔՀԿ-ների հետ համագործակցության համար և տեղական ինքնակառավարման ոլորտում ակտիվորեն աշխատող ՔՀԿ-ների հետ իրականացվում են համատեղ ծրագրեր կամ քննարկումներ:
3. ՔՀԿ-ների կողմից միջինից բարձր և դրական է գնահատվում ՏԻՄ-երի ջանքերը բնակիչների շրջանում տեղեկատվության տարածման մասով:
4. ՔՀԿ-ների համար առկա է բարենպաստ միջավայր մոնիթորինգի և գնահատման աշխատանքներ, լուսաբանման և համագործակցային ծրագրերի իրականացման համար:

2.3. Ավագանու անդամների հետ հարցազրույցների արդյունքներ.

Ավագանու անդամների հետ հարցազրույցների (Հավելված 2) արդյունքներով ***բնակչության մասնակցությունը հանրային լսումներին, ՏԻՄ-երի կողմից կազմակերպված քննարկումներին, ավագանու նիստերին գնահատվեց*** **ցածր**, սակայն նշվեց, որ մասնակցություն որպես այդպիսին առնվազն մեկ-երկու հոգու ներկայությամբ մշտապես կա, իսկ մարդկանց հետաքրքրվածությունը գնահատեցին բարձր:

Բնակչության մասնակցությունը խթանելու համար ՏԻՄ-երի կողմից իրականացվող քայլերի կամ ծրագրերի մասով ավագանու անդամները նշեցին, որ կարևորում են ավագանու դերը որպես կապող օղակ հասարակության և ՏԻՄ-երի միջև, ինչի մասով էլ իրենք մշտական հանդիպումներ են ունենում բնակիչների հետ և լսում նրանց հարցերն ու խնդիրները:

Տեղական ինքնակառավարմանը բնակչության ցածր մասնակցության պատճառների մասով ավագանու անդամներից Նարինե Իսկանդարյանը մեկնաբանեց հետևյալը.

«Տեղական ինքնակառավարմանը բնակչության ցածր մասնակցության պատճառներից մեկը կասեմ, որ կապմել եմ բնակիչների հետ շփումից ելնելով, մեր բնակիչները լիովին վստահում են Արմավիր խոշորացված համայնքի ղեկավար՝ Դավիթ Խուդաթյանին և ամբողջ ՏԻՄ-երի

մասնակիցներին, ավագանու անդամներին, մենք յուրաքանչյուր խնդրի նկատմամբ հետևողական ենք, փորձում ենք տալ դրական լուծում, իմ կարծիքով դա է»:

Թամարա Գրիգորյանը արտահայտեց հետևյալ տեսակետը.

«Ես կարծում եմ, պատճառն այն է, որ երևի իրենք տեղեկացված չեն, հիմնական պատճառը, իմ կարծիքով, դա է, որովհետև շատերը բնակչության իսկապես չգիտեն, որ կարելի է դիմել ՏԻՄ-երի անդամին և մասնակցել նաև նիստերին, թվում է հենց ամենաառաջինը և գլխավորը տեղեկատվության պակասն է»:

Ավագանու անդամները նշեցին, որ համայնքի բնակիչները հիմնականում անձնապես իրենց են մոտեցել և բարձրաձայնել խնդիրները՝ ՏԻՄ-երի կողմից հատկացվող դրամական օգնությունների, աղբահանության, բարձրահարկ շենքերի տանիքների կաթոցների և ճանապարհների վերանորոգման աշխատանքների հետ կապված: Ավագանու անդամների խոսքով՝ բոլոր հարցերի մասով եղել է հետևողական աշխատանք և մեկնարկել է համապատասխան գործընթաց: Իսկ բարձրաձայնված խնդիրները լուծելու համար կիրառվող ընթացակարգերի և գործիքակազմերի մասով հարցազրույցի մասնակիցները նշեցին, որ և՛ ավագանու հանձնաժողովի, և՛ պարբերական այցերի միջոցով հետևում են բարձրաձայնված խնդիրների լուծմանը և քաղաքացիները ցանկության դեպքում յուրաքանչյուր պահի էլ կարող են կայքի միջոցով կամ այլ տարբերակով ծանոթանալ տարվող աշխատանքներին:

Բնակիչների շրջանում տեղեկատվության տարածման և անհրաժեշտ ազդակների ու ռեսուրսների օգտագործման մասով Նարինե Իսկանդարյանը բավարար գնահատեց կատարված աշխատանքը, իսկ Թամարա Գրիգորյանը նշեց.

«Կարծում եմ որտեղ աշխատանք, այնտեղ թերություն: Ռեսուրսները բնականաբար բավարար չեն, եթե ես ասում եմ բնակչությունը ավելի պակաս և քիչ տեղեկացված է, դա հենց այդ ռեսուրսի պակասն է, ինձ թվում է ամեն դեպքում դեռ աշխատանք կա, որ պիտի արվի, որ գործընթացն ավելի ճիշտ և ավելի պատշաճ կազմակերպվի»:

Ավագանու անդամները ներկայացրեցին, որ իրենց կատարած լավ աշխատանքի օրինակով և մարդկանց տեղեկացնելու մեթոդաբանությամբ են փորձում խթան հանդիսանալ բնակչության ակտիվության ու մասնակցության հարցում, իսկ խրախուսական որևէ տարբերակ կամ մրցանակ չի կիրառվել, որով հնարավոր կլիներ ակտիվացնելու մասնակցային գործընթացը:

Ըստ հարցազրույցի մասնակիցների, մշտապես կազմակերպվում են հանրային լսումներ կամ քննարկումներ և, բացի դրանցից, իրենք միշտ հասանելի են բնակիչների համար յուրաքանչյուր հուզող հարցի շուրջ: Իսկ բնակիչներ-ավագանի կապը գնահատեցին «բավարար» ու մեկնաբանվեց, որ բնակիչների կողմից ներկայացվում են և՛ բողոքներ, և՛ առաջարկներ, որոնց բոլորի մասով բնակիչ-ավագանի-համայնքապետ կապի միջոցով հնարավոր է լինում գտնել լուծումներ: Հիմնական առաջարկները, որ իրենց են ուղղվել և բարձրաձայնվել, կապված են եղել լուսակիրների տեղադրման և փողոցների անցումների կարգավորման հետ:

Ամփոփում

1. Ավագանու անդամների կողմից Արմավիր համայնքում բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը բնորոշվեց «ցածր և պասիվ», սակայն հետաքրքրվածության առումով գնահատվեց «միջինից բարձր»:
2. Որպես ցածր մասնակցության հիմնական երկու պատճառներ, նշվեցին՝ քաղաքացիների տեղեկացվածության պակասը և, ՏԻՄ-երի հանդեպ ունեցած վստահությունից ելնելով, մասնակցության հանդեպ անտարբերությունը:
3. Բնակիչները հնարավորության դեպքում իրենց հուզող խնդիրները ներկայացնում են ավագանու անդամներին, որոնց մասով տարվում են համապատասխան աշխատանքներ և հանձնաժողովների ու այցերի միջոցով վերահսկվում է դրանց իրականացումը:
4. Բնակչության շրջանում տեղեկատվության տարածման առումով ՏԻՄ-երի գործադրած ջանքերը գնահատվեցին «բավարար», բայց նշվեց ավելին անելու կարևորությունը:
5. Բացի տեղեկատվության տարածումից և աշխատանքների ներկայացումից, բնակչության մասնակցությունը խթանելու համար որևէ այլ մեխանիզմ ավագանու անդամները չեն կիրառում: Չի կիրառվում նաև որևէ խրախուսանքի տարբերակ:

2.4. Համայնքի ղեկավարի հետ հարցազրույցի արդյունքներ

Համայնքի ղեկավար՝ Դավիթ Խուդաթյանի հետ իրականացված հարցազրույցի(Հավելված 4) արդյունքում, ընդհանուր առմամբ, շատ պասիվ գնահատվեց մասնակցությունը, ստանալով 2-3 բալ առավելագույն 10-ից: Իսկ ՏԻՄ-երի կողմից բնակչության մասնակցությունը խթանելու համար իրականացվող ծրագրերի ու քայլերի մասով նշվեց, որ Արմավիր համայնքը միացել է «Բաց կառավարման գործընկերություն» ծրագրին և դրա շրջանակներում ներդրել են «Մասնակցային բյուջե» կոչվածը, ըստ որի բյուջեն պլանավորում է տող, որի ծախսերը որոշում է հանրության ինչ-որ շրջանակ՝ քաղաքացիները, ՔՀԿ-ները կամ երիտասարդական խմբերը, սակայն դեռևս դրա արդյունավետությունը ցածր է: Համայնքապետի խոսքով.

«Առկա պատկերը այս պահին իրականում ցածր է և քաղաքացիները քիչ հետաքրքրվածություն են ցուցաբերում, նույնիսկ այնպիսի կարևոր աշխատանքների հանրային քննարկումները, ինչպիսիք են, օրինակ՝ բյուջեի հաստատումը, որը ամբողջ տարվա մեր գլխավոր անելիքն է, մեծ հաշվով կամ այդ տարվա սուբվենցիոն աշխատանքների ծրագրի հաստատումը: Շատ ժամանակ հանրային քննարկումը ուղղակի թղթաբանական է, հանրային քննարկումը սուբվենցիայի մասով և բյուջեի մասով օրենքի պարտադիր պահանջ է, բայց նույնիսկ այդ դեպքում դա շատ ժամանակ ուղղակի թուղթ լրացնել է, մենք իրավեկում ենք, ասում ենք, հայտարարում ենք դրա մասին, բայց մասնակցում են 1-2 հոգի, որոնք մեծ հաշվով բոլոր տեղերում կրկնվում են, այսինքն 1-2 հոգի ում հետաքրքիր է, մնացածի մոտ անհետաքրքրվածություն է»:

Բնակչության մասնակցության գրանցված դեպքերում, նրանց կողմից հարցերի կամ առաջարկների բարձրաձայնման մասով մեկնաբանվեց, որ հետաքրքրված 1-2 հոգին, ովքեր մասնակցում են, խնդիրներ բարձրաձայնել են և դրանք ստացել են համապատասխան լուծումներ՝ ըստ ընթացակարգի: Իսկ կիրառվող ընթացակարգերի և գործիքակազմերի մասով

համայնքի ղեկավարը նշեց, որ շարժվում են աշխատանքային ընթացակարգերով, առաջարկությունը լսում են, խմբագրում, քննարկում, հետո եթե առաջարկությունը իրենց աշխատանքային տրամաբանության մեջ է և իրենց մոտ չի գեներացվել, գեներացվել է այլ մարդու մոտ, ապա օգտագործում են:

Բնակիչների տեղեկացվածության ապահովման մասով նշվեց, որ համայնքային հեռուստատեսություն չկա, սակայն սոցցանցերով, կայքով, ավագանու նիստերի հեռարձակման ժամանակ մշտապես արվել է ամեն բան, որպեսզի մասնակցությունը ակտիվանա, սակայն այդ ամենը փոփոխություն չի բերել: Իսկ արդեն մասնակցության խթանման մեթոդաբանության հետ կապված՝ Դավիթ Խուդաթյանը նշեց, որ

«Բաց կառավարման գործընկերություն» ծրագրի շրջանակներում մեր համար ուղենիշ ենք սահմանել մասնակցությունը խթանելը և աշխատում ենք այդ ուղղությամբ»:

Պարզ դարձավ, որ մրցանակի, խրախուսանքի տեսքով մասնակցային գործընթացը ակտիվացնելու որևէ տարբերակ չի կիրառվել, սակայն 2019-ին եղել է մեկ մասնավոր դեպք, երբ երիտասարդների խմբի կողմից համայնքապետարանի ֆինանսավորմամբ իրականացվել է ամանորյա միջոցառում ու այդ ժամանակ հայտարարվել է շնորհակալություն:
Ավագանու նիստերի ուղիղ հեռարձակման մասով նշվեց, որ քանի ամիս դադար է եղել, պայմանավորված ավագանու անդամների թվի մեծացմամբ և տեղի սահմանափակությամբ, նոր դահլիճի առկայությամբ կրկին շարունակվելու է ուղիղ հեռարձակումը: Պարզվեց, որ դիտելիությունը շատ քիչ է եղել, մոտավորապես 5-7 հոգու մակարդակով:

Ըստ Դավիթ Խուդաթյանի մեկնաբանության, բնակիչները համայնքային կայքից քիչ են օգտվում, իսկ տեղեկատվությունը հիմնականում ստանում են ֆեյսբուքյան էջերից: Համայնքապետի հավաստմամբ ֆեյսբուքյան էջը շատ ակտիվ է, այլ համայնքների հետ համեմատականի պարագայում: Առկա է դիմումներին/հարցումներին պատասխանելու, մերժումների հիմնավորումների վիճակագրություն և 2022-ին, ի համեմատ 2021թ.-ի, ներկայացման ակտիվությունը աճել է: Համայնքապետը մեկնաբանեց նաև հետևյալը.

«2022 թվականի ընթացքում մենք արդեն ամբողջությամբ անցել ենք մեկ պատուհանի սկզբունքին, GIZ-ի ֆինանսավորմամբ քաղաքապետարանի առաջին հարկում կա քաղաքացիների սպասարկման գրասենյակ, որտեղ այդ ամբողջ թղթաբանությունը իրականացվում է մի կետից, այսինքն պահվում է»:

Պարզ դարձավ, որ ՏԻՄ-երի կողմից կամ այլ կազմակերպությանը պատվիրակելու միջոցով չեն իրականացվել հարցումներ կամ հանրային քվեարկություններ որևէ հարցի շուրջ որոշում ընդունելու համար:

Ամփոփում

1. Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը գնահատվեց որպես «շատ պասիվ», ինչի մասով որպես հիմնական պատճառ նշվեց բնակիչների անհետաքրքրվածությունը իրականացվող քննարկումներին և հանդիպումներին:
2. ՏԻՄ-երի կողմից ներդրվել է Մասնակցային բյուջեի մեխանիզմը, սակայն մասնակցության արդյունքները դեռևս գոհացուցիչ չեն:
3. Ըստ համայնքապետի՝ ՏԻՄ-երի կողմից գործադրվում են անհրաժեշտ իրազեկողական աշխատանքները՝ բնակիչներին տեղեկացնելու քննարկումների և հանդիպումների մասին:
4. ՏԻՄ-երն իրենց համար ուղենիշ են սահմանել խթանելու բնակչության մասնակցությունը:
5. Ավագանու նիստերի հեռարձակումները, պայմանավորված տեխնիկական որոշ խնդիրներով, որոշ ժամանակ չեն իրականացվել, սակայն շուտով նորից կիրականացվեն:
6. Բնակիչները քիչ են օգտվում համայնքի պաշտոնական համացանցային կայքից և առավել մեծ ակտիվություն են ցուցաբերում ֆեյսբուքյան հարթակում:
7. Համայնքապետարանում առկա է մեկ պատուհանի սկզբունքով աշխատող քաղաքացիների սպասարկման գրասենյակ, որտեղ բոլոր տվյալները պահվում են, իսկ կայքի մասով առկա է դիմումներին/հարցումներին պատասխանելու, մերժումների հիմնավորումների վիճակագրություն, ըստ որի 2022-ին, ի համեմատ 2021թ.-ի, ներկայացման ակտիվությունն աճել է:
8. ՏԻՄ-երի կողմից չի կիրառվում խրախուսանքի մեխանիզմներ, ինչպես նաև չեն իրականացվում պատվիրակված հարցումներ համայնքի հիմնախնդիրների կամ առաջնահերթությունների սահմանման վերաբերյալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով կատարված ֆոկուս-խմբային քննարկումները և հարցազրույցները՝ կարող ենք վերհանել հետևյալ կարևոր ուղղությունները, որոնք հետագա բարելավման և ակտիվ աշխատանքների կարիք են ունենալու.

1. Բոլոր շահագրգիռ կողմերի կողմից նշվեց, որ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության մակարդակը ցածր է, որի հիմնական պատճառներն են՝ բնակիչների շրջանում մասնակցային իրավունքների և մեխանիզմների մասին տեղեկացվածության ցածր մակարդակը: Չնայած այս համատեքստում ՏԻՄ-երի գործադրած ջանքերին՝ արդյունքները գոհացուցիչ չեն և անհրաժեշտ է ՔՀԿ-ՏԻՄ-համայնքի բնակիչներ օղակում առավել արդյունավետ աշխատանք և համագործակցություն:
2. Անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել առցանց գործիքների կիրառմանը և ներդրմանը, իսկ արդեն իսկ կիրառվողների պարագայում մշակել դրանց տարածման և հանրային լայն ընդգրկում ապահովելու մեխանիզմներ:
3. Համայնքի պատվիրակմամբ տեղի չեն ունենում համայնքի տարբեր հիմնախնդիրների և առաջնահերթությունների սահմանման համար նախատեսված հարցումներ և հետազոտություններ, որոնք բնակիչների համար մասնակցային արդյունավետ մեխանիզմ կարող են հանդիսանալ, իսկ համայնքային իշխանությունների համար ունենալ կարևոր խորհրդատվական նշանակություն:
4. Բնակիչների մասնակցության ակտիվությունը խթանելու համար նախատեսված խրախուսանքի որևէ տարբերակ չի կիրառվում, ինչը կարող էր բարձրացնել մասնակցության հանդեպ բնակիչների հետաքրքրվածությունը:
5. Նկատվող հիմնական մասնակցային ակտիվությունը դրսևորվում է առավելապես անձնական շփումների մակարդակում և չի ձևափոխվում ինստիտուցիոնալ մասնակցության մոդելի, իսկ բովանդակային առումով առավելապես գերակշռում են դիմումներն ու բողոքները, որոնք հիմնականում չեն վերածվում առաջարկների ու համագործակցության:
6. ՔՀԿ-ների գործունեության համար համայնքում առկա բարենպաստ միջավայրը և ՏԻՄ-երի կողմից համագործակցությանը միտված քաղաքականությունը ունեն մեծ պոտենցիալ բնակիչների մասնակցության խթանման առումով քայլերի իրականացման համար:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. Արմավիր համայնքի բնակչության շրջանում մասնակցային հնարավորությունների և իրավունքների մասին տեղեկատվության առավել լայն տարածման համար համագործակցել ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող ՔՀԿ-ների և երիտասարդական նախաձեռնող խմբերի հետ, որի արդյունքում փոխադարձորեն կօգտագործվեն առկա տեղեկատվության տարածման հարթակները, ինչպես նաև կրթական նյութերն ու հնարավորությունները:

2. Տարեկան բյուջեով ՔՀԿ-ներին տրամադրվող աջակցության պարագայում որպես առաջնահերթություն սահմանել համայնքի բնակիչների մասնակցային իրավունքների և հնարավորությունների մասին իրազեկման արշավների իրագործումը:

3. Սահմանել հստակ խրախուսական մրցանակ ամենաակտիվ մասնակցող քաղաքացիների համար, որը կունենա ամենամյա բնույթ և ջանքեր կգործադրվեն այդ իրադարձությանը հանրային մեծ ուշադրության հատկացման համար:

4. Անձնական շփումների միջոցով ակտիվություն ցուցաբերող քաղաքացիներին փորձել ներգրավել ինստիտուցիոնալ ընթացակարգերում՝ համագործակցելով ավագանու անդամների և բնակավայրերի վարչական ղեկավարների հետ:

5. Ապահովել համայնքի ավագանու նիստերի ուղիղ հեռարձակումների վերականգնումը և մշակել հանրության հետ հաղորդակցային ռազմավարություն ու հստակ չափորոշիչներ, ըստ որոնց առավել մեծ թվով դիտումներ և ներգրավում կապահովվի:

6. Համայնքի առաջնահերթությունների սահմանման, ինչպես նաև կարևոր որոշումների ընդունումից առաջ ուղիղ կամ միջնորդավորված տարբերակով իրականացնել խորհրդակցական հարցումներ, ինչը հնարավորություն կտա առավել մեծ թվով քաղաքացիների ներգրավել ՏԻ մասնակցային գործընթացում:

7. Առավել ծավալուն ու հայեցակարգային փոփոխություններ ենթադրող իրավական ակտերի (ռազմավարություն, բյուջե), ինչպես նաև՝ բացահայտ հանրային հետաքրքրություն ներկայացնող նախագծերի քննարկման համար նախատեսել ողջամիտ և ավելի երկար (ոչ պակաս, քան մեկ ամիս, իսկ տոնական և արձակուրդային շրջանում՝ ոչ պակաս, քան 1.5 ամիս) ժամանակահատված՝ տարբերակելով այդ իրավական ակտերը գոյություն ունեցող իրավակարգավորումներում ոչ էական փոփոխություններ առաջադրող նախագծերից:

8. Իրավական ակտի նախագծի հրապարակմանը զուգահեռ՝ իրավական ակտերի նախագծի հետ մեկտեղ հրապարակել նաև հակիրճ բնութագիր, որը առաջարկվող նախագծի վերաբերյալ կտրամադրի առավել մատչելի, հիմնական կետերն ամփոփող, ցանկալի է նաև՝ տեսա- կամ ձայնային ձևաչափով ներկայացվող տեղեկություն, որը

հասկանալի կլինի իրավաբանական կամ այլ մասնագիտական կրթություն չունեցող քաղաքացիների համար:

9. Կատարելագործել համայնքային կայքը՝ հարմարեցնելով արդի պահանջներին և ապահովելով բաժանորդագրության ու պատշաճ ծանուցումների (օրինակ՝ նույն նախագծի այլ տարբերակի հրապարակման, հանրային քննարկման կազմակերպման կամ ամփոփաթերթի առցանց տեղադրման մասին) առավել հարմարեցված համակարգ: Ի լրումն դրան՝ մշակել կայքում ակտիվ գործիքակազմ՝ ապահովելու հանրությունից հետադարձ կապ ստանալու հնարավորությունը, որն իր հերթին տվյալներ կապահովի հետագա գործունեության համար:

10. Հանրային լսումները և քննարկումները հնարավորության դեպքում կազմակերպել աշխատանքային օրվա երկրորդ հատվածում, որպեսզի դպրոցականների և ուսանողների մասնակցության մասով չառաջանան հավելյալ ժամային խոչընդոտներ:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. ՀՀ Սահմանադրություն, 9-րդ գլուխ
2. «ՏԻ մասին» ՀՀ օրենք
3. Որոշում 17 հունվարի 2022 թվականի N 004-Ա Համայնքում Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին
4. Որոշում 17 հունվարի 2022 թվականի N005-Ա Համայնքում հանրային բաց լսումների և(կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին
5. Որոշում 17 հունվարի 2022 թվականի N003-Ա Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին
6. Արմավիր համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը 2021-2026թթ. (ՀՀԶԾ)
7. Արմավիր համայնքի տարեկան աշխատանքային պլաններ (ՏԱՊ) 2020թ., 2021թ., 2022թ.
8. Արմավիր համայնքի տարեկան բյուջե 2020թ., 2021թ., 2022թ.
9. Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 26-ի N 214-Ա որոշում համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին
10. Արմավիր համայնքի հանրային քննարկումների և հանրային լսումների մասին արձանագրություններ (2020-2023)
11. Զեկույց «Արմավիրի մարզի երիտասարդների խնդիրները և հասարակական, քաղաքական ակտիվության մակարդակը», ՄԻՏՔ ՀԿ, 2021թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Ֆոկուս-խմբային քննարկման հարցաշար

1. Ի՞նչ եք կարծում, որքանով են Արմավիր խոշորացված համայնքի բնակիչները մասնակցում տեղական ինքնակառավարմանը, հնարավորության դեպքում կարող եք գնահատել 1-10 բալանոց համակարգով, որտեղ 1-ը նշանակում է՝ «շատ ցածր», 10-ը՝ «շատ բարձր»:
1.1. Որո՞նք են, ըստ Ձեզ, Արմավիր խոշորացված համայնքում մասնակցության ցածր կամ բարձր մակարդակների պատճառները: Եթե այն ցածր է, ապա ի՞նչ լուծումներ կառաջարկեիք: Եթե այն բարձր է, ապա համայնքային իշխանություններն ի՞նչ քայլեր են ձեռնարկել դրա համար:
2. Արդյո՞ք ինքներդ երբևէ մասնակցել եք ՏԻՄ-ի կողմից կազմակերպված որևէ գործընթացի կամ միջոցառման՝ հանրային լսումներ կամ քննարկումներ, օնլայն հարցումներ կամ քվեարկություններ, «բաց դռների» օրերին հանդիպումներ ավագանու անդամների կամ համայնքապետի հետ: Եթե այո, ապա ի՞նչ հաճախականությամբ եք մասնակցել և որո՞նք են եղել արդյունքները:
2.1 Մասնակցության ձևաչափերից որն ի՞նչ արդյունավետությամբ է աշխատում, ինչը կարելի էր փոխել:
3. Ի՞նչպես եք տեղեկանում ՏԻՄ-երի կողմից ձեռնարկված միջոցառումների մասին և եթե առնչվել եք այդպիսի միջոցառումների, ապա կարո՞ղ եք նշել որոշ միջոցառումների օրինակներ:
3.1. Այդ համատեքստում ինչպե՞ս կգնահատեք ՏԻՄ-երի աշխատանքը 1-10 բալանոց համակարգում, որտեղ 1-ը նշանակում է՝ «շատ վատ», 10-ը՝ «գերազանց»:
4. Արդյո՞ք բնակիչները բարձրաձայնում են համայնքում առկա խնդիրները, ակտիվորեն մասնակցում են բանավեճերին, ներկայացնում են առաջարկություններ:
5. Համայնքապետարանը արդյո՞ք հասկանալի կերպով ներկայացնում է քննարկումների օրակարգերը, հանրամատչելի կերպով ներկայացնում է ծրագիրը, համայնքային բյուջեն և այլն:
6. Երբևէ որևէ տարբերակով համագործակցե՞լ եք ՏԻՄ-երի հետ այս կամ այն խնդրի վերհանման և/կամ լուծման շուրջ, արդյո՞ք այդպիսի համագործակցությունը արդյունավետ է եղել:
7. Վերջին 3 տարիների ընթացքում եղե՞լ են դեպքեր, որ առաջարկներով ու դիմումներով հանդես գաք ՏԻՄ-երի հետ աշխատանքներում: Եթե այո, ապա ինչպիսի՞ ընթացք է տրվել դրանց, ի՞նչ արդյունքներ են գրանցվել:

Հավելված 2

Արմավիր համայնքի ավագանու անդամների հետ հարցապրույցի հարցաշար

1. Ինչպե՞ս կգնահատեք բնակչության մասնակցությունը հանրային լսումներին, ՏԻՄ-երի կողմից կազմակերպված քննարկումներին, ավագանու նիստերին:
1.1 Եթե խոսենք թվերով, ապա 1-10 բալանոց համակարգով ինչպե՞ս կգնահատեք բնակչության մասնակցությունը վերոնշյալ գործընթացներին:
2. Ի՞նչ քայլեր կամ ծրագրեր են ձեռնարկում ՏԻՄ-երը բնակչության մասնակցությունը խթանելու համար:
3. Ըստ Ձեզ, որո՞նք են տեղական ինքնակառավարմանը բնակչության ցածր մասնակցության պատճառները:
4. Բնակչության մասնակցության գրանցված դեպքերում, նրանց կողմից հարցեր կամ առաջարկներ բարձրացվե՞լ են: Եթե՝ այո, ինչպիսի՞ լուծումներ են տրվել:
5. Ի՞նչ ընթացակարգեր և գործիքակազմ են կիրառվում բարձրաձայնված խնդիրները լուծելու համար (օր.՝ հանձնաժողովի միջոցով հետևում են համայնքի ղեկավարի աշխատանքներին, կամ ինչ-որ որոշումներ են ընդունվում, պարբերական այցեր են կազմակերպվում աշխատանքի ընթացքին հետևելու համար և այլն):
6. Ըստ Ձեզ, արդյո՞ք օգտագործվել են բոլոր ազդակները և ռեսուրսները, որպեսզի բնակիչները տեղեկանան և ակտիվ մասնակցություն ցուցաբերեն և արդյո՞ք դրանց օգտագործումը բավարար է եղել:
7. Ի՞նչ մեթոդաբանություն եք օգտագործել բնակչության մասնակցությունը խթանելու համար:
8. Կիրառվե՞լ է որևէ ոգևորող տարբերակ, օրինակ՝ մրցանակի, խրախուսանքի տեսքով կամ այլ մեթոդ, որով հնարավոր կլիներ ակտիվացնելու մասնակցային գործընթացը:
9. Ավագանու անդամների հետ քաղաքացիների հետ հանդիպման բաց դռների օրեր, հանրային լսումներ կազմակերպվո՞ւմ են, ինչպիսի՞ մասնակցություն է քաղաքացիների կողմից և ինչպե՞ս կգնահատեք քաղաքացիներ-ավագանի կապը:
9.1 Վերոնշյալ մասնակցության դեպքերում, հիմնականում ի՞նչ հարցեր են բարձրաձայնվում և ի՞նչ ընթացք է տրվում դրանց, արդյո՞ք քաղաքացիների կողմից ներկայացվում են խնդիրների լուծման առաջարկներ, թե՞ միայն բողոքներ են ներկայացվում:

Հավելված 3

ՔՀԿ ներկայացուցիչների հետ հարցապրույցի հարցաշար

1. Ի՞նչ եք կարծում, որքանո՞վ են Արմավիր խոշորացված համայնքի բնակիչները մասնակցում տեղական ինքնակառավարմանը, հնարավորության դեպքում կարող եք գնահատել 1-10 բալանոց համակարգով, որտեղ 1-ը նշանակում է՝ «շատ ցածր», 10-ը՝ «շատ բարձր»:
2. Արդյո՞ք ունեք հետազոտություն այս թեմայով կամ երբևիցե որևէ կերպ ուսումնասիրել եք այն: Եթե այո, ապա որոնք են եղել արդյունքները:
3. Ի՞նչ եք կարծում, ՏԻՄ-երը ձեռնարկու՞մ են բավարար գործողություններ և միջոցառումներ բնակիչների մասնակցությունը խթանելու համար: Եթե կան այդպիսիք, ապա կարո՞ղ եք նշել որոշ միջոցառումների օրինակներ:
3.1. Այդ համատեքստում ինչպե՞ս կգնահատեք ՏԻՄ-երի աշխատանքը 1-10 բալանոց համակարգում, որտեղ 1-ը նշանակում է՝ «շատ վատ», 10-ը՝ «գերազանց»:
4. Ըստ Ձեզ, Արմավիր խոշորացված համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցությունը կրում է առավել շատ ֆորմալ բնույթ, թե՞ ականատես եք եղել կամ կարող եք մատնանշել բովանդակային մասնակցության օրինակներ:
5. Ձեր ՔՀԿ-ն երբևէ համագործակցե՞լ է ՏԻՄ-երի հետ այս կամ այն խնդրի վերհանման և/կամ լուծման շուրջ, արդյո՞ք այդպիսի համագործակցության ընթացքում ներգրավված են եղել համայնքի բնակիչները: Եթե այո, ապա ի՞նչ ձևաչափով:
6. Վերջին 3 տարիների ընթացքում եղե՞լ են դեպքեր, որ առաջարկներով ու դիմումներով հանդես գաք ՏԻՄ-երի հետ աշխատանքներում: Եթե այո, ապա ինչպիսի՞ ընթացք է տրվել դրանց, ի՞նչ արդյունքներ են գրանցվել:
7. Ի՞նչ եք կարծում, ո՞րն է պատճառը բնակչության մասնակցության ոչ այդքան բարձր ցուցանիշի, ի՞նչ խնդիրներ կան և ի՞նչ լուծումներ կառաջարկեիք:
8. Արդյո՞ք ՔՀԿ-ները բավարար կերպով մասնակցում են ՏԻՄ-երի որոշումների ընդունման գործընթացներին, իրականացնում են հանրային վերահսկողություն համայնքապետարանի աշխատանքների նկատմամբ կամ իրականացնում ջատագովություն:

Հավելված 4

Արմավիր համայնքի ղեկավարի հետ հարցազրույցի հարցաշար

1. Ինչպե՞ս կգնահատեք բնակչության մասնակցությունը հանրային լսումներին, ՏԻՄ-երի կողմից կազմակերպված քննարկումներին, ավագանու նիստերին:
1.1. Եթե խոսենք թվերով, ապա 1-10 բալանոց համակարգով ի՞նչպես կգնահատեք բնակչության մասնակցությունը վերոնշյալ գործընթացներին:
2. Ի՞նչ քայլեր կամ ծրագրեր են ձեռնարկում ՏԻՄ-երը բնակչության մասնակցությունը խթանելու համար:
3. Բնակչության մասնակցության գրանցված դեպքերում, նրանց կողմից հարցեր կամ առաջարկներ բարձրացվե՞լ են: Եթե՝ այո, ինչպիսի՞ լուծումներ են դրանց տրվել:
3.1. Ի՞նչ ընթացակարգերով և գործիքակազմերով են լուծումներ տրվում խնդիրներին:
4. Ըստ Ձեզ, արդյո՞ք օգտագործվել են բոլոր ազդակները և ռեսուրսները, որպեսզի բնակիչները տեղեկանան և ակտիվ մասնակցություն ցուցաբերեն և արդյո՞ք դրանց օգտագործումը բավարար է եղել:
5. Ի՞նչ մեթոդաբանություն եք օգտագործել բնակչության մասնակցությունը խթանելու համար:
6. Կիրառվե՞լ է որևէ ոգևորող տարբերակ, օրինակ՝ մրցանակի, խրախուսանքի տեսքով կամ այլ մեթոդ, որով հնարավոր կլիներ ակտիվացնելու մասնակցային գործընթացը:
7. Ինչպե՞ս գիտենք, 10000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքը ավագանու նիստերին ուղիղ միացմամբ հետևելու հնարավորություն պետք է ունենա, արդյո՞ք այդ կարգը կիրառվում է Արմավիր խոշորացված համայնքում:
7.1. Ուղիղ միացումների առկայության դեպքում բնակչության քանի՞ տոկոսն է դիտում նիստերը:
8. Արդյո՞ք առկա է վիճակագրություն, թե բնակչության քանի՞ տոկոսն է օգտվում կամ ի՞նչ հաճախելիություն է առկա, համայնքային կայքից տեղեկություններ ստանալու կամ դիմումներ և հարցումներ ուղարկելու համար:
9. Առկա՞ է արդյոք դիմումներին/հարցումներին պատասխանելու, մերժումների հիմնավորումների վիճակագրություն:
10. Երբևէ ՏԻՄ-երի կողմից կամ այլ կազմակերպությանը պատվիրակելու միջոցով իրականացվե՞լ են հարցումներ կամ հանրային քվեարկություններ որևէ կարևոր նշանակության հարցի շուրջ որոշում ընդունելու համար: